

# ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

## ԶԱՏԿԱԿԱՆ ՏՈՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

*Մայր Աթոռ Ս. Էջմիածինը արժանավայել կերպով դիմավորեց Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը։ Կատարվում էին Ավագ շաբաթվա օրերի բոլոր եկեղեցական արարողությունները, որոնց ներկա էր լինում հավատացյալների խուռն բազմություն։*

*Մարտի 31-ին, շաբաթ օրը, Ճրագալույցի երեկոյան արարողություններին և հանդիսավոր պատարագին Մայր Տաճարը լցված էր հավատացյալների բազմությամբ։ Սուրբ պատարագը մատուցեց հոգեշնորհ Հայրիկ աբեղա Ավետիսյանը։ Հավարտ պատարագի տեղի ունեցավ նշխարաբաշխություն։*

*Ապրիլի 1-ին, կիրակի, Քրիստոսի հրաշափառ Հարության տոնի օրը, Մայր Աթոռը տոնական տեսք էր ստացել։ Հավաքված էր հավատացյալների մեծ բազմություն։ Արարողությունները կատարվում էին պատշաճ հանդիսավորությամբ։ Օրվա պատարագիչն էր գերապատիվ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։ Պատարագի ժամանակ քարոզ խոսեց պատարագիչ սրբազանը, իսկ քարոզի վերջում կարդաց Վեհափառ Հայրապետի Զատկի շնորհավորական հեռագիրը։*

*Ապրիլի 2-ին, երկուշաբթի, Մայր Տաճարում մատուցվեց պատարագ՝ նվիրված համայն ննջեցելոց հիշատակին։ Պատարագիչն էր հոգեշնորհ Մուշեղ աբեղա Պետիկյանը։ Պատարագից հետո կատարվեց հոգեհանգիստ։*

* * *

*Ապրիլի 8-ին, Համաշխարհային առաջին և երկրորդ պատերազմների ընթացքում զոհված բյուրավոր նահատակների հիշատակին մատուցվեց սուրբ պատարագ Մայր Տաճարում։ Պատարագիչն էր հոգեշնորհ Հայրիկ աբեղա Ավետիսյանը։ Հավարտ պատարագի կատարվեց հոգեհանգիստ և ավուր պատշաճի քարոզ խոսեց պատարագիչը։*

* * *

*Գերագույն Հոգևոր Խորհրդի կարգադրությամբ Մայր Աթոռի միաբան հոգեշնորհ Մեսրոպ աբեղա Անթարյանը մեկնեց Մոսկվա՝ տեղի հայոց եկեղեցու մի քանի խնդիրները կարգավորելու և զատկական տոները անցկացնելու համար։*

* * *

*Գերագույն Հոգևոր Խորհրդի հրամանով Ս. Էջմիածնից Հյուսիսային Կովկասի Զալցր հայաբնակ գյուղը մեկնեց Ս. Հռիփսիմե վանքի վանահայր բարձրապատիվ Տ. Նահապետ վարդապետ Մուրադյանը՝ զատկական տոները հին տոմարով անցկացնելու և տեղի հավատացյալ հայությանը մխիթարելու համար։*

* * *

*Թեմական գործերով Վրաստանի թեմակալ առաջնորդ գերաշնորհ Տ. Վարդան եպիսկոպոս Տեր-Սահակյանը ապրիլի 23-ին ժամանեց Մայր Աթոռ։ Սրբազանը գործերը կարգավորելուց հետո անմիջապես վերադարձավ իր պաշտոնատեղին՝ Թբիլիսի։*

⁂

Մայիսի 4-ին Գերագույն Հոգևոր Խորհրդի հրամանով գերաշնորհ Տ. Սահակ Եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը ինքնաթիռով մեկնեց Մոսկվա, հայոց նորաբաց եկեղեցու օծումը կատարելու և զատկական տոներին պատարագելու ու հավատացյալ հայությանը մխիթարելու համար։

Եկեղեցու օծումը և զատկական տոներն անց կացնելուց հետո մայիսի 14-ին սրբազանը վերադարձավ Մայր Աթոռ։

⁂

Վեհափառ Հայրապետի հրամանով վերանորոգվեց և բացվեց Մոսկվայի հայոց Ս. Հարության եկեղեցին։

Մայիսի 5-ին, Զատկի Ճրագալույցի երեկոյան, հավատացյալների հոծ բազմության ներկայությամբ տեղի ունեցավ եկեղեցու վերաբացման կարգը, ապա կատարվեց հանդիսավոր ծիսակատարություն և մատուցվեց սուրբ պատարագ։ Արարողություններին նախագահում էր գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը։

Մայիսի 6-ին, Փրկչի հրաշափառ Ս. Հարության տոնի օրը, Վեհափառ Հայրապետը նախագահեց արարողություններին, ներկա եղավ սուրբ պատարագին, իր հուզիչ քարոզով մխիթարեց հավատացյալներին և հաղորդեց նրանց սփյուռքահայության սրտաբուխ ողջույնները։

Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ է նշանակված Մայր Աթոռի միաբան հոգեշնորհ Տ. Պարգև աբեղա Գևորգյանը և կազմված է եկեղեցական խորհուրդ՝ հավատացյալ ժողովրդի հոգևոր կարիքները հոգալու և եկեղեցու բարվոք գործունեությունը ապահովելու համար։

⁂

Մայիսի 10-ին, Հինգշաբթի, Քրիստոսի Համբարձման տոնին Մայր Տաճարում պատարագ մատուցվեց։ Պատարագիչն էր հոգեշնորհ Տ. Եղիշե աբեղա Սարգսյանը։

Հայ հավատացյալ ժողովրդի ամենասիրելի տոներից մեկն է Համբարձումը, որի առիթով Ս. Էջմիածին էին հավաքվել բազմաթիվ ուխտավորներ Երևանից, Հայաստանի զանազան շրջաններից և անգամ եղբայրական ռեսպուբլիկաներում ապրող հայերից։ Պատարագին երգում էր Հոգևոր Ճեմարանի ուսանողներից կազմված եռաձայն երգչախումբը Հոգևոր Ճեմարանի երգի և երաժշտության դասախոս և Մայր Տաճարի խմբավար պ. Հրանտ Գևորգյանի ղեկավարությամբ։ Պատարագից հետո տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն նվիրված Հյուսիսային Ամերիկայի Արևելյան թեմի նախկին առաջնորդ, Մայր Աթոռի ավագագույն միաբան գերաշնորհ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի հիշատակին։

⁂

Մայիսի 13-ին, կիրակի օր, Երկրորդ Ծաղկազարդին, Մայր Աթոռում պատարագ մատուցվեց։ Պատարագիչն էր հոգեշնորհ Տ. Եղիշե աբեղա Սարգսյանը։ Սուրբ պատարագից հետո կատարվեց Հայրապետական մաղթանք, նվիրված Հայրապետական Աթոռի Սսից Ս. Էջմիածին տեղափոխության հիշատակին։ Պատարագիչ Եղիշե աբեղան ավուր պատշաճի քարոզ խոսեց բնաբան ունենալով «Միշտ անշարժ պահեա զԱթոռն Հայկազնեանց»։ Բացատրելով Ամենայն Հայոց Հայրապետության դերը մեր ժողովրդի կյանքում քարոզիչն ասաց. «Հայոց Հայրապետությունն այսօր ազգային և կրոնական նույնպիսի փառավոր դեր է կատարում, որքան անցյալում և այդ է պատճառը, որ մոտավորապես 3 ամիս է, ինչ Լուսավորչի արժանավոր հաջորդ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. ազգընտիր Հայրապետն այցելում է արտասահմանյան երկրներում ապրող հայ ժողովրդի բեկորներին և իր հայրապետական օրհնություններն է բաշխում նրանց և պատվիրում, որ Հայրենիքից հեռու ապրող, Հայրենիքի և Մայր Աթոռի կարոտը ունեցող մեր ժողովուրդը կառչած մնա Հայոց Եկեղեցուն, Ս. Էջմիածնին և Հայոց Ընդհանրական Հայրապետական Աթոռին»։

Իր քարոզի վերջում Տ. Եղիշե աբեղան մաղթանքներ վերառաքեց առ ամենաբարին Աստված Ս. Լուսավորչի Աթոռի անշարժության, անսասանության և հավերժության համար։

***

Մայիսի 27-ին, կիրակի, Մայր Տաճարում մեծաշուք հանդիսությամբ կարդացվեց Նորին Ս. Օծության Տ. Տ. Վազգեն Ա Սրբազնագույն Կաթողիկոսի անդրանիկ կոնդակը, ուղղված հայ եկեղեցականներին և համայն հայ ժողովրդին։

***

Գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը մայիսի 28-ին, երկուշաբթի, Մայր Աթոռից մեկնեց Մոսկվա, որտեղից կուղևորվի Նյու-Յորք, մասնակցելու ընդհանուր եկեղեցական խորհրդակցության, որպես ներկայացուցիչ Վեհափառ Հայրապետի։

***

Մայիսի 28-ին, 29-ին և 31-ին սուրբ պատարագ մատուցվեց Ս. Հռիփսիմեի, Ս. Գայանեի և Ս. Շողակաթի վանքերում։ Ավուր պատշաճի քարոզ խոսեցին հոգեշնորհ Տ. Տ. Հայրիկ և Մաշտոց աբեղաները և հարգանք մատուցեցին նահատակ կույսերին։

## ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

### ՇՎԵԴԻԱՅԻ ՊՐԵՄՅԵՐ ՄԻՆԻՍՏՐ ՏԱԳԵ ԷՌԼԱՆԴԵՐԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Ապրիլի 7-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Շվեդիայի պրեմյեր մինիստր պ. Տագե Էռլանդերը։ Նրան ընկերակցում էին Շվեդիայի ներքին գործերի մինիստր Գ. Հեդլունդը կնոջ հետ, Շվեդիայի արտաքին գործերի մինիստրության քաղաքական բաժնի վարիչ Գ. Յարինգը կնոջ հետ, պրեմյեր մինիստրի անձնական քարտուղար Ու. Պալմեն, Շվեդիայի արտաքին գործերի մինիստրության առևտրի բաժնի երկրորդ քարտուղար Գ. Լարևնացոնը, ՍՍՌՄ-ում Շվեդիայի արտակարգ ու լիազոր դեսպան Սուլմանը կնոջ հետ և շվեդացի թղթակիցներ։ Նրանց ուղեկցում էին կառավարության պատասխանատու բարձրաստիճան պաշտոնյաներ, գիտության և մամուլի ներկայացուցիչներ։

Մայր Տաճարի բակում հյուրերին դիմավորեց գերապատիվ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը Եղիշե և Մեսրոպ աբեղաների հետ։

Բարի գալուստի ջերմ խոսքերից հետո սրբազանը հյուրերին ծանոթացրեց Մայր Տաճարի պատմական հնագույն անցյալի, ճարտարապետական արվեստի, ինչպես և մանրանկարչության հետ։ Հյուրերը եղան նաև Մայր Տաճարին կից եկեղեցա-հնագիտական թանգարանում։

Խոր տպավորություն ստանալով Մայր Աթոռից և ջերմ շնորհակալություն հայտնելով սրբազանին հյուրերը վերադարձան Երևան։

Պրեմյեր մինիստրի խնդրանքով կինո-ժապավենի վրա նկարահանվեց Մայր Տաճարը իր բոլոր մանրամասնություններով։

### ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ Պ. ՔՐԻՍՏԻԱՆ ՊԻՆՈՅԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Մայիսի 22-ին, երեքշաբթի օրը, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Ֆրանսիայի Արտաքին Գործերի Մինիստր պ. Քրիստիան Պինոն իր տիկնոջ հետ։ Պ. Պինոյին ուղեկցում էին ՍՍՌՄ-ում Ֆրանսիայի Արտակարգ ու Լիազոր դեսպան պ. Մորիս Դեժանը, Արտաքին Գործերի Մինիստրի Կաբինետի դիրեկտոր պ. Շառլ Բոշարը, Արտաքին Գործերի Մինիստրության Ինֆորմացիայի և մամուլի բաժնի վարիչ պ. Պիեռ Բարաղյուկը և ֆրանսիական մի շարք թերթերի թղթակիցներ։

Պ. Քրիստիան Պինոյին ուղեկցում էին նաև Ֆրանսիայում ՍՍՌՄ-ի Արտակարգ և Լիազոր Դեսպան Ս. Ա. Վինոգրադովը, ՍՍՌՄ Արտաքին Գործերի Մինիստրության Եվրոպական առաջին բաժնի վարիչ Հ. Ա. Հարությունյանը և ուրիշ պաշտոնական անձինք։

Հյուրերին Մայր Տաճարի ավագ դռների մոտ ընդունեցին Տաճարի ավագ լուսարար գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը և Թանգարանի աշխատակից բարեշնորհ Տ. Եղիշե աբեղա Սարգսյանը։ Ֆրանսիացի հյուրերին տրվեց համապատասխան բացատրություն Տաճարի և նրան կից եկեղեցա-պատմական Թանգարանում պահված հնությունների մասին, որից հետո պ. Քրիստիան Պինոն և նրան ուղեկցող անձինք ընդունվեցին Նորին Վեհափառության կողմից։ Ընդունելության ժամանակ պ. Քրիստիան Պինոն հայտարարեց, որ ինքը շատ ուրախ է, որ փոխադարձ այցելություն է տալիս Վեհափառին Էջմիա-

*ծնում, ոչ շատ առաջ Փարիզում հանդիպելուց հետո։ Զրույցի ընթացքում պ. Քրիստիան Պինոն հետաքրքրվեց Հայ Եկեղեցու գործունեությամբ։ Ընդունելության վերջում Վեհափառ Հայրապետը Արտաքին Գործերի պ. Մինիստրին նվիրեց անգլերեն թարգմանությամբ հրատարակված Օրմանյան սրբազանի «Հայոց Եկեղեցի» խորագիրը կրող ուսումնասիրությունը՝ ի հիշատակ պ. Քրիստիան Պինոյի Ս. Էջմիածին այցելության։ Հարգելի հյուրը շնորհակալություն հայտնեց ընդունելության և նվերի համար։*

***

*Ապրիլի 11-ին Մայր Աթոռ ժամանեց Իտալիայի միջնակարգ դպրոցների ազգային արհեստակցական միության պատվիրակությունը։ Պատվիրակության կազմում էին Իտալիայի տարբեր քաղաքների միջնակարգ դպրոցների դասատուներ, այդ թվում կրոնական առարկաներ դասավանդող ուսուցիչներ, բարձրագույն ուսումնական հաստատությունների պրոֆեսորներ։*

*Հյուրերին ընդունեց գերապատիվ Տ. Սահակ եպիսկոպոսը, որը նրանց հանգամանորեն ծանոթացրեց Մայր Տաճարի անցյալի, նրա ճարտարապետության, որմանկարչության հետ։ Հյուրերը խորը հետաքրքրություն ցուցաբերեցին Հայաստանյայց Եկեղեցու պատմական անցյալի և հավատքի դավանության ու Կաթոլիկ Եկեղեցու հետ ունեցած հարաբերությունների նկատմամբ։*

*Հյուրերը լավ տպավորություններով և գոհ վերադարձան Երևան։*

***

*Ապրիլի 27-ին, ուրբաթ օրը, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Բելգիայի աշխատանքային ընդհանուր ֆեդերացիայի գլխավոր քարտուղարի տեղակալ և «Վալենիա» թերթի գլխավոր խմբագիր պ. Անդրե Ռենարը։ Մայր Աթոռի հյուրընկալ կամարների տակ նրան ընդունեցին Մայր Տաճարի ավագ լուսարար գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը և Մայր Տաճարին կից եկեղեցա-հնագիտական թանգարանի աշխատակից հոգեշնորհ Եղիշե աբեղա Սարգսյանը։ Պ. Անդրե Ռենարին տրվեց համապատասխան բացատրություն Մայր Տաճարի և նրան կից եկեղեցա-պատմական թանգարանում եղած սրբազան անոթների և եկեղեցական ու պատմական իրերի մասին, որից հետո նա հետաքրքրվեց Մայր Աթոռի միաբանության կյանքով։ Հարգելի հյուրը գոհացուցիչ պատասխաններ ստանալուց հետո լավագույն տպավորություններով մեկնեց Երևան։*

***

*Մայիսի 2-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց չինական երիտասարդության պատվիրակությունը, որը հյուր էր մեր Հայրենիքի մայրաքաղաք Երևանում Մայիսի 1-ի տոնի կապակցությամբ։ Մայր Աթոռում հյուրերին ընդունեցին Մայր Տաճարին կից թանգարանի աշխատակիցներ բարեշնորհ Տ. Եղիշե աբեղա Սարգսյանը և շնորհունակ Ազատ սարկավագ Սանթուրյանը։*

*Հայր Եղիշեն հյուրերին մանրամասնորեն ծանոթացրեց Մայր Տաճարի կառուցման ժամանակաշրջանի, վերանորոգումների և մեր ժողովրդի համար անցյալում ու ներկայում նրա կատարած փառավոր դերի մասին։ Հյուրերը եղան նաև Վեհարանում, որտեղ դիտեցին 17-րդ դարի Հովնաթանյանների կողմից նկարազարդված ծաղկյա դահլիճը, որը մեծ տպավորություն թողեց նրանց վրա։ Հյուրերը լավագույն տպավորություններով մեկնեցին Ս. Էջմիածնից շնորհակալություն հայտնելով ցույց տրված ուշադիր վերաբերմունքի համար։*

***

*Մայիսի 14-ին Մայր Աթոռ այցելեց Իսլանդիայի կուլտուրայի գործիչների պատվիրակությունը, որին գլխավորում էր Իսլանդիայի ականավոր շինարար ինժեներ Սիգուրդուր Ուորոդդսենը։ Մայր Տաճարում հյուրերին ընդունեցին գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը և թանգարանի աշխատակից շնորհունակ Ազատ սարկավագ Սանթուրյանը։ Մեկնելիս հյուրերը շնորհակալություն հայտնեցին սրբազանին մանրամասն բացատրությունների և պատմական տեղեկությունների համար հայ ժողովրդի այնքան արժեքավոր պատմական Տաճարի մասին։ Հյուրերը շատ գոհ մեկնեցին Երևան։*